ՔԱՂՎԱԾՔ

«Երևանի Տ.Շևչենկոյի անվան թիվ 42 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի 15.12.2022թ. կայացած նիստի N 03 արձանագրությունից

Նիստին մասնակցում էին «Երևանի Տ.Շևչենկոյի անվան թիվ 42 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի բոլոր 9 անդամները:

Օրակարգ՝

1. 2022թ-ի եկամուտների և ծախսերի ճշտված նախահաշվի քննարկում

Զեկուցող Էլ.Թումանյանը տեղեկացրեց, որ բյուջեով նախատեսված 70907,9 հազար դրամի փոխարեն տրվել է 83131,8 հազար դրամ (285 աշակերտի համար), որից 79621,6 հազ. դրամ՝ պարտադիր կրթության, 250,6 հազ. դրամ՝ սոցիալապես անապահով աշակերտների դասագրքերի գումար, 3259,6 հազ. դրամ՝ ընդհանուր ներառական կրթության համար: Վերապատրաստման համար 264,0 հազ. դրամ, (վերապատրաստվել է 11 ուսուցիչ), կամավոր ատեստավորման համար՝ 2312,8 հազ. դրամ: Մրցանակ ստացած 1 աշակերտի գումար՝ 120,0 հազ. դրամ: Գույքի ձեռքբերման համար ԿԳՄՄՆ-ի ծրագրի շրջանակում տրամադրվել է 63972,1 հազ. դրամ, որը կծախսվի 2023 թ-ի համաձայն գնումների մասին օրենքի մրցակցային կարգով:
Ընդհանուր եկամուտը կազմում է 150050,7 հազ. դրամ:
Նշվեց, որ ծախսային մասում կատարվել է որոշ հոդվածների փոփոխություն՝ աշխատավարձի հոդված՝ 68866,7 հազ. դրամի 80536,7 հազ. դրամի, կոմունալ ծախսեր՝ 2600,0 հազ. դրամի փոխարեն 3000,0 հազ. դրամ, մասնագիտական ծառայություն՝ 1220.0 հազ. դրամի փոխարեն 1280,0 հազ. դրամ, պարտադիր հարկեր հոդվածում՝ 400,0 հազ դրամի փոխարեն 460,0 հազ. դրամ, վերապատրաստման հոդված՝ 264,0 հազ. դրամ ավելացում: 2022թ-ի նախահաշվում տրամադրված է 2021թ-ից մնացած 2251,5 հազ. դրամ գույքի գնման համար, որը ծախսվել է: Իսկ 7434,9 հազ. դրամը, որը 2021թ-ի դեկտեմբեր ամսից տրամադրվել է մարզադահլիճի նախագծային աշխատանքների համար, չի ծախսվել:
Հիմք ընդունելով Էլ.Թումանյանի զեկույցը՝ կառավարման խորհուրդը

Որոշեց

Հավանություն տալ 2022թ-ի եկամուտների և ծախսերի ներկայացված նախահաշվին և ներկայացնել ԿԳՄՄՆ հաստատման:

Կառավարման խորհրդի նախագահ՝ Ա.Մկրտչյան

Քարտուղար՝ Ա.Մարտիրոսյան